ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2018թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 597-րդ և 605-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 1-ի «Երևան համայնքին գույք նվիրաբերելու մասին» հ.83-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Երևան քաղաքի Ռուսթավելու փողոցի հ.17 հասցեում գտնվող նախկին Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոցի շենքը՝ 3264.93 քմ ընդհանուր մակերեսով, օժանդակ շինությունը՝ 13.5 քմ ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 13.4 քմ ընդհանուր մակերեսով և 0.33164 հա մակերեսով հողամասը, ինչպես նաև Երևան քաղաքի Թաիրովի փողոցի հ.14 հասցեում գտնվող Երևանի նախկին N81 միջնակարգ դպրոցի շենքը՝ 862.8 քմ ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 48.3 քմ ընդհանուր մակերեսով, օժանդակ շինությունը՝ 30.0 քմ ընդհանուր մակերեսով և 0.2582 հա մակերեսով հողամասը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու որոշման նախագծով նախատեսվում է որպես նվիրաբերություն ընդունել Երևան քաղաքի Ռուսթավելու հ.17 հասցեում գտնվող Երևանի Շ. Ռուսթավելու անվան նախկին N23 հիմնական դպրոցի և Երևան քաղաքի Թաիրովի հ.14 հասցեում գտնվող Երևանի նախկին N81 միջնակարգ դպրոցի շենքերը, կաթսայատները, օժանդակ շինությունները և դրանցով ծանրաբեռնված հողամասերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 1-ի հ.83-Ա որոշմամբ նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված Երևան քաղաքի Ռուսթավելու հ.17 հասցեում գտնվող Երևանի Շ. Ռուսթավելու անվան նախկին N23 հիմնական դպրոցի շենքը՝ 3264.93քմ ընդհանուր մակերեսով, օժանդակ շինությունը՝ 13.5քմ ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 13.4քմ ընդհանուր մակերեսով և 0.33164 հա մակերեսով հողամասը, ինչպես նաև Երևան քաղաքի Թաիրովի հ.14 հասցեում գտնվող Երևանի նախկին N 81 միջնակարգ դպրոցի շենքը՝ 862.8քմ ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 48.3քմ ընդհանուր մակերեսով, 30.0քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունը և 0.2582 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Երևան համայնքին՝ այդ շենքերում նախադպրոցական կրթություն (մանկապարտեզ) և (կամ) արտադպրոցական դաստիարակություն (երաժշտական, սպորտի, արվեստի դպրոց և այլն) կազմակերպելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 1-ի «Երևան համայնքին գույք նվիրաբերելու մասին» հ.83-Ա որոշման 1-ին կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ